17094

368.3
S-77

1932

334.6-7
1361 2

# ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԽՍՀՄ-Ի ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1929 ԹՎ.Ի ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՈՐՈՇՄԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԽՍՀ Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թվի ապրիլի 7-ին կայացրած վորոշումից)։

2. *Արհեստագործական կոոպերատիվ ընկերությունների անդամների աշխատանքի և կենցաղի պայմանների բարելավման և առողջացման նպատակով, արհեստագործական կոոպերացիայով կոոպերացված բոլոր անձերի և նրանց ընտանիքների սպասարկումը փոխադարձ ապահովագրման և փոխոգնության կարգով (ապահովում կենսաթոշակով և նպաստով, բժշկական և պրոֆիլակտիկ ոգնությամբ և այլն) դնել արհեստագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխոգնության դրամարկղի վրա։*

(ԽՍՀ Միության Որ. 1932 թ· № 26 հ· 160)

2010
368.3
S-77
2001

368.3
Տ-77

## ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1937 Թ. ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ ՏՐՎԵԼԻՔ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*1. Հաստատել՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում՝ տրվող նպաստների մասին կցած սույն կանոնադրությունը:*

*2. Սույն կանոնադրությունը գործածության մեջ դնել ԽՍՀՄ-ի արհեստագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխօգնության դրամարկղների ամբողջ սիստեմում:*

*3. Ժամանակավոր անաշխատունակության տրվող նպաստների մասին կցած կանոնադրությունն ուժի մեջ դնել 1937 թվի օգոստոսի 1-ից, տարածելով սույնը նույն ժամկետից նաև ժամանակավոր անաշխատունակության այն դեպքերի վրա, վորոնք մինչև 1937 թվի օգոստոսի 1-ը դեռ շարունակվում են:*

*4. Ժամանակավոր անաշխատունակության միջոցում տրվող նպաստների կանոնադրությունն ուժի մեջ դնելու մոմենտից, վերացնել դրամական ապահովման մասին գոյություն ունեցող կանոնադրության այն մասը, վորը վերաբերվում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում տրվող նպաստներով ապահովելուն և վորը հաստատված է Համարդկոոպխորհրդի Նախագահության կողմից 1933 թ. ապրիլի 19-ին:*

Համարդկոոպխորհրդի Նախագահության
Նախագահ՝ Ա. ԺԱՐՈՎ
Նախագահության քարտուղար՝ Ա. ՄԵԼԱԽՈՎԱ



# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ ՏՐՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### I. ՈՎ ՈՒՆԻ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

*1. Ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում նպաստ ստանալու իրավունք ունեն արհեստագործական կոոպերացիայի արտելների բոլոր անդամները:*

*Արհեստագործական կոլտնտեսությունների այն անդամները, վորոնք աշխատում են արհեստագործական և գյուղական տնտեսության մեջ, ապահովվում են բացառապես ըստ իրենց աշխատանքի միմիայն արհեստագործության ասպարեզում:*

*Արհեստագործական կոլտնտեսությունների այն անդամները, վորոնք աշխատում են միմիայն գյուղական տնտեսության մեջ, նպաստ չեն ստանում:*

*2. Արտելների կին անդամները, բացառությամբ սեզոնային աշխատանքով զբաղվողների և տանը աշխատողների, օգտվում են նպաստ ստանալու իրավունքից ժամանակավոր աշխատունակության ժամանակամիջոցում հղիության և ծննդաբերության հետևանքով, անկախ նրանց մինչև արձակուրդ ստանալու որն ունեցած աշխատանքի տևողությունից:*

*Սեզոնային աշխատողներից, նաև տանը աշխատողներից հղիության և ծննդաբերության հետևանքով նպաստ ստանալու իրավունք ունեն նրանք, վորոնք աշխատել են անընդհատ (հ. 22) վոչ պակաս վեց ամսից մինչև հղիության պատճառով աշխատանքից ազատված որը:*

*Ժամանակավոր անաշխատունակության միջոցում ստացվող*

նպաստի ժամանակը մտնում է աշխատանքի մեջ:

3. Նպաստ տրվում է, յեթե արտելի անդամն անաշխատունակ է դառնում աշխատանքի շրջանում:

Նպաստ տրվում է նաև, յեթե անաշխատունակությունն բռնկվել է այն ժամանակ, յերբ արտելում աշխատանքը կանգ է առել ամբողջությամբ կամ առանձին ցեխերում:

Այդ ժամանակամիջոցում նպաստ տրվում է արտելի անդամին, յեթե նրա աշխատավարձը կամ աշխատավարձի մասը պահպանված է յեղել աշխատանքի կանգնեցնելու շրջանում:

Սակայն յեթե անաշխատունակությունն առաջացել է հղիության պատճառով մենակ կնոջ մոտ, ապա նպաստ տրվում է այն դեպքում, յերբ արտելում աշխատանքը դադարած շրջանում նրա անդամների աշխատավարձը պահպանված չի յեղել:

Այս արտոնությունը չի տարածվում այն մենակ կանանց վրա, վորոնք հղիության պատճառով արձակուրդ ստանալու ժամանակ աշխատում են տանը:

4. Արտելների այն անդամները, վորոնք հիվանդացել են իրենց հերթական կամ լրացուցիչ արձակուրդում գտնվելու ժամանակամիջոցում, ստանում են նպաստ արձակուրդի ընթացքում յեղած հիվանդության օրերի համար ընդհանուր հիմունքներով, (իսկ արձակուրդը յերկարացվում կամ տեղափոխվում է գործող կանոնների համաձայն):

5. Յեթե արտելի անդամը աշխատունակությունը կորցրել է առանց աշխատավարձի պահպանման, արձակուրդի ժամանակամիջոցում, ապա այդպիսի արձակուրդի հաշվին ընկնող անաշխատունակության օրերի համար նպաստ չի տրվում: Յեթե անաշխատունակությունը շարունակվում է և արձակուրդից հետո, ապա տրվում է նպաստ սկսած օրվանից, յերբ արտելի անդամը պետք է անցներ աշխատանքի:

6. Բանտարկության և դատա-բժշկական եքսպերտիզայի ժամանակամիջոցի համար նպաստ չի տրվում: Յեթե անաշխատունակությունը շարունակվում է նաև ազատվելուց հետո և յեթե արտելի անդամին վերականգնել են իր աշխատանքի մեջ, ապա նպաստ տրվում է ազատվելուց հետո յեղած ժամանակի համար:

## 2. ԻՆՉ ԴԵՊՔՈՒՄ Է ՏՐՎՈՒՄ ՆՊԱՍՏ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

7. Արտելի անդամներն ստանում են նպաստ ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում:



Гос. Библиотека ՀՍՍՌ
45611-ամ.
30684-63

ա) Հիվանդության ժամանակ, յեթե նրանք կորցրել են աշխատունակությունը:

բ) Հիվանդության կապակցությամբ այլ աշխատանքի անցնելու ժամանակ:

գ) Հղիության ժամանակ և ծննդաբերությունից հետո:

դ) Ընտանիքի անդամի հիվանդության ժամանակ՝ այն դեպքում, յեթե հիվանդին խնամելու անհրաժեշտություն կա:

ե) Կարանտինի ժամանակ:

Արտելների անդամներին այս բոլոր դեպքերում աշխատանքից ազատել կարող են միմիայն բժիշկները, (իսկ վորտեղ նրանք չկան՝ բուժակները), վորոնց վերապահված է այդ իրավունքը առողջապահության մարմինների կամ արհեստագործական արհ ապահդրամարկղների կողմից բժշկա-աշխատավորական՝ եքսպերտային հանձնաժողովները (ԲԱԵՀ):

Ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում արձակուրդները կարող են տալ բուժող բժիշկները տասը օրից վոչ ավելի ժամկետով: Տաս օրից ավելի ժամկետով անաշխատունակության թերթիկ տրվում է միայն գլխավոր բժշկի կողմից հաստատվելուց հետո, կամ տրվում է տվյալ բուժ. հիմնարկներում կազմակերպած հատուկ հանձնաժողովի կողմից:

### 2. ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՎԱՆԴ ԱՆԴԱՄԻ ԽՆԱՄԵԼԸ

8. Յեթե ընտանիքի անդամը հիվանդանում է և կարիք կա նրան խնամելու, ապա նպաստ տրվում է արտելի այն անդամին, վորը խնամում է հիվանդին, յեթե նա չի աշխատում տանը, յեթե խնամքի բացակայությունը վտանգ է սպառնում հիվանդի կյանքին, կամ առողջությանը ու յեթե հիվանդին հնարավոր չէ տեղավորել հիվանդանոցում և ընտանիքում չկա ընտանիքի մի ուրիշ անդամ, վորը կարողանար խնամել հիվանդին:

Մինչև յերկու տարեկան յերեխայի հիվանդության դեպքում արտելի անդամ մայրը, վերոհիշյալ պայմաններում ստանում է նպաստ անկախ այն բանից, թե ընտանիքում կա արդյոք մի ուրիշը, վորը կարողանար խնամել հիվանդ յերեխային, թե վոչ:

Առանձին դեպքերում, յերբ բուժող մարմինների պահանջով յերեխայի մայրը պետք է գտնվի նրա մոտ հիվանդանոցում, յերեխայի ծանր հիվանդության պատճառով, արտելի անդամ մայրը պետք է ստանա նպաստ հիվանդանոցում գտնվելու ժամանակամիջոցի համար:

Առողջ յերեխային խնամելու համար նպաստ չի տրվում, անկախ նրանց հասակից:

## 3. ԿԱՐԱՆՏԻՆ

9. Կարանտինի ժամանակ նպաստ տրվում է, յեթե արտելի անդամը աշխատանքից հեռացված է սանիտարական հսկողության մարմինների կողմից, վարակիչ հիվանդության հետևանքով, իսկ տանն աշխատողն ստանում է նպաստ, յեթե նրան փաստորեն արգելված է շարունակել աշխատանքը։

## 4. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼԸ

10. Յեթե արտելի անդամը (բացառությամբ տանն աշխատողների) հիվանդության պատճառով չի կարող շարունակել իր սովորական աշխատանքը, բայց կարող է կատարել այլ աշխատանք, առանց վնասելու առողջությանը և առանց խախտելու բժշկության նորմալ ընթացքը, ապա նա անցնում է այդ աշխատանքին։

11. Այլ աշխատանքի փոխադրելու անհրաժեշտությունը, այդ աշխատանքի բնույթը և այդ աշխատանքում մնալու տևողությունը վորոշում է բուժող բժիշկը, ընդ որից ավելի ժամկետով, այլ աշխատանքի փոխադրելու դեպքում հաստատում է գլխավոր բժիշկը, իսկ մեկ ամսից ավելի ժամկետի դեպքում՝ բժշկա-աշխատավորական էքսպերտային հանձնաժողովը։ Փոխադրումը իրականացվում է արտելի վարչության կողմից, համաձայնեցնելով այն աշխատանքի պաշտպանության ու կենցաղի բարելավման բյուրոյի (ԱՀԿԲԲ-ի) հետ։

Յեթե արտելի անդամը համաձայն չէ բուժող բժշկի յեզրակացությանը, այլ աշխատանքի փոխադրելու մասին, ապա նա կարող է բողոքել դրա մասին բժշկա-աշխատավորական էքսպերտային հանձնաժողովին։ Յեթե հանձնաժողովը գտնում է նրա բողոքը անհիմն, ապա պարապուրդի ժամանակի համար նպաստ չի տրվում։

Արտելի անդամների կողմից բժշկա-աշխատավորական հանձնաժողովին տրված բողոքները պետք է նայվեն հերթից դուրս։

12. Յեթե անաշխատունակության թերթիկով նշված ժամկետի ընթացքում, արտելի անդամին աշխատանք չի տրված ապա այդ պատճառով բաց թողած օրերի համար նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով։

13. Ժամանակավոր անաշխատունակության պատճառով այլ աշխատանքի փոխադրվելու դեպքում նպաստը (հ. 10) հաշվվում է ընդհանուր հիմունքներով, բայց այնպես, վոր այդ նպաստը նոր աշխատանքի աշխատավարձի հետ միասին չգերազանցի առաջիկա աշխատանքի լրիվ աշխատավարձին (վորը հաշվարկվում է նպաստի չափը վորոշելու համար 27 և 28 հոդվածների կարգով)։

Այդ կարգը չի կիրառվում, յերբ ավելի թեթև աշխատանքի փոխադրումը տեղի յե ունեցել հղիության կապակցությամբ։ Այդ դեպքում աշխատավարձի պահպանումը ընկնում է արտելի վարչության վրա ԽՍՀ Միության Կենտ. գործկոմի և Ժողկոմխորհի 1936 թ. հուլիսի 27-ի վորոշումով հաստատված կարգով։

(ԽՍՀ Միության օրենք. ժող. 1936 թ. № 34, հ. 309)։

## 5. ԿՐՃԱՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՓՈԽԱԴՐՎԵԼԸ

14. Յեթե արտելի անդամը (բացառությամբ տանն աշխատողների), հիվանդության պատճառով չի կարող իր աշխատանքը կատարել լրիվ աշխատանքային օրվա ընթացքում և փոխադրվել է կրճատված աշխատանքային օրվա, ապա այդ անաշխատունակության շրջանի համար, յերբ կրճատված աշխատանքային օրվա ժամանակ աշխատանքի աշխատավարձը նախորդ աշխատավարձից ցածր է, նպաստը տրվում է այդ աշխատանքում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում։

## 6. ԻՆՉՔԱՆ ԺԱՄԱՆԱԿՎԱ ՀԱՄԱՐ Է ՏՐՎՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Նպաստը տրվում է՝ սկսած անաշխատունակությունը կարգնելու առաջին օրից մինչև նրա վերականգնումը կամ մինչև հաշմանդամության հաստատումը՝ բժշկա-աշխատավորական էքսպերտային հանձնաժողովի կողմից։

16. Սեզոնային աշխատանքով զբաղվողների նկատմամբ կիրառվում են հետևյալ կանոնները։

ա) Յեթե անաշխատունակությունն առաջ է յեկել պրոֆեսիոնալ հիվանդության կամ աշխատանքային խեղանդամության հետևանքով, ապա նպաստը տրվում է ընդհանուր հիմունքներով մինչև աշխատունակության վերականգնելը կամ հաշմանդամության հաստատումը, ընդ որում պրոֆեսիոնալ հիվանդության կամ աշխատանքային խեղանդամության առկայությունը վորոշվում է հաշմանդամության ժամանակվա նպաստ տրվելու պայմանների համաձայն։

բ) Յեթե անաշխատունակությունը առաջ է յեկել այլ պատճառներից, ապա նպաստը ըստ ընդհանուր կանոնի վոչ ավելի քան

այն աշխատանքի ժամանակամիջոցի ավարտումը, վորը արտելի անդամը տանում եր մինչև անաշխատունակության սկսվելը: Նպաստը սակայն 75 որացույցային որվանից ավելի չի տըրվում:

17. Այն հաշմանդամներին (ինչպես կենսաթոշակ ստացողներին այնպես և չստացողներին), վորոնք աշխատում են վորպես արտելի անդամներ, ընդհանուր հիվանդության ժամանակ նպաստ տրվում է շարունակաբար՝ յերկու ամսից վոչ ավելի և վոչ ավելի յերեք ամսից որացույցային տարվա ընթացքում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը):

Յեթե աշխատող հաշմանդամի մոտ ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է պրոֆեսիոնալ հիվանդության կամ աշխատանքային խեղանդամության հետևանքով, ապա նպաստը տրվում է մինչև առողջանալը, կամ մինչև հաշմանդամության խմբի վերանայելը, նոր հիվանդության կապակցությամբ:

18. Ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում հղիության և ծննդաբերության հետևանքով նպաստ տըրվում է արտելի բոլոր կին անդամներին հիսունվեց որացույցային որվա ընթացքում և հիսունվեց որացույցային որվա ընթացքում՝ ծննդաբերությունից հետո:

Յեթե արձակուրդի փաստական տևողությունը նախածննդաբերության շրջանում (հաշված աշխատանքից ազատվելու որից մինչև ծննդաբերության որը) դուրս գա ավելի շատ, կամ ավելի քիչ այդ ժամկետներից, արձակուրդում փաստորեն անցկացրած որերի համար, ծննդաբերությանը հաջորդող շրջանը հաշվվում է ծննդաբերության որից:

19. Յեթե մինչև հղիության հարյուր հիսունվեց որը (յոթ լուսնային ամիսների) լրանալը լինում է վաղածնունդ և կամ թե որենքով թույլատրված դեպքերում առաջ է բերվում վիժեցում, ապա նպաստ տրվում է ընդհանուր հիվանդության ժամանակ յեղած կանոնների համաձայն:

## 7. Ի՞ՆՉ ՉԱՓՈՎ Ե ՆՊԱՍՏ ՏՐՎՈՒՄ

20. Լրիվ աշխատավարձի չափով նպաստ տրվում է անաշխատունակության առաջին որից արտելների հետևյալ անդամներին

ա) Մեկ տարուց վոչ պակաս անընդհատ ստաժ ունեցող (հ. 22) ստախանովականներին և հարվածայիններին, անկախ նրանց ստախանովյան կամ հարվածային աշխատանքի տևողությունից:



բ) Նախկին կարմիր գվարդիականներին և կարմիր պարտիզաններին և շքանշանակիրներին, անկախ աշխատանքի ստաժի տևողությունից:

գ) Մինչև 18 տարեկան դեռահասներին, վորոնք անընդհատ (հ. 22) աշխատել են մեկ տարուց վոչ պակաս:

Արտելի անդամ այն ստախանովականների և հարվածայինների և դեռահասների նկատմամբ, վորոնք չունեն վերևում նշված աշխատանքի ստաժը, նպաստի չափը սահմանվում է ըստ 21-րդ հոդվածի:

21. Արտելների անդամների մնացած կատեգորիաներին ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում, անկախ այդ անաշխատունակությունն առաջացնող պատճառներից (հիվանդություն, հաշմանդամություն, հղիություն և այլն) նպաստ տըրվում է:

ա) Յերեք տարուց վոչ պակաս անընդհատ աշխատանքի (հ. 22) ստաժ ունեցողներին, անաշխատունակության առաջին որից լրիվ աշխատավարձի չափով:

բ) Յերկու տարուց վոչ պակաս անընդհատ աշխատանքի (հ 22) ստաժ ունեցողներին՝ առաջին որացույցային քսան որվա համար աշխատավարձի 3/4-ի չափով և այնուհետև լրիվ աշխատավարձի չափով:

գ) Տասնութ ամսից վոչ պակաս անընդհատ աշխատանքի (հ. 22) ստաժ ունեցողներին՝ առաջին քսան որացույցային որվա համար աշխատավարձի 2/3-ի չափով և այնուհետև լրիվ աշխատավարձի չափով:

դ) Մեկ տարուց վոչ պակաս անընդհատ աշխատանքի (հ. 22) ստաժ ունեցողներին՝ աշխատավարձի 2/3-ի չափով անաշխատունակության ամբողջ ժամանակվա համար:

ե) Մեկ տարուց պակաս անընդհատ աշխատանքի (հ. 22) ստաժ ունեցողներին առաջին յերեսուն որացույցային որվա համար 50%-ի չափով և այնուհետև աշխատավարձի 2/3-ի չափով:

22. Յեթե արտելի անդամը անցնում է մի արտելից մյուսը կամ մի ձեռնարկությունից կամ մի հիմնարկությունից մի ուրիշ հիմնարկություն և կամ արտել վոչ կանոնադրությունը և կամ վոչ ներքին կարգը խախտելու հետևանքով, ապա այդպիսի փոխադրման դեպքում աշխատանքի ստաժը չի համարվում ընդհատված, յեթե յերկու աշխատանքների մեջ յեղած ընդհատումը ավելի չի յեղել մեկ ամսից:

Փոխադարձ և սոցիալական ապահովագրության կամ սոցիա-

լական ապահովման կարգով կենսաթոշակ ստանալու ժամանակամիջոցում ստաժը չի ընդհատվում (բայց ստաժի մեջ չի էլ մտնում):

23. Ծառայողների կամ բանվորների ստաժը հաշվելիս նրանց աշխատանքի ժամանակ հավասարեցվում է արհեստագործական կոոպերացիայի արտելի անդամների աշխատանքին:

Աշխատանքի ստաժը հաշվելիս հաշվի յեն առնում ծառայության տարիները ԲԳԿԲ-ի շարքերում, յերկարատև արձակուրդ ստացող, պահեստ գնացած կամ ծառայությունից բոլորովին արձակված՝

ա) Միջին, ավագ և բարձր հրամանատարական և պետ կազմի, նաև գերակետային ծառայության շարքային և կրտսեր հրամանատարական և պետ կազմի նկատմամբ:

բ) Ժամկետային ծառայության շարքային և կրտսեր հրամանատարական և պետկազմի անձերի նկատմամբ, յեթե նրանք պահեստի միջին հրամանատարական և պետկազմի կոչում ստանալու համար տվել են քննություն կամ մինչև ԲԳԿԲ-ի շարքերը մտնելը աշխատել են վորպես արտելի անդամներ կամ ծառայողներ

Ստաժի մեջ հաշվում են նաև ուսհիմնարկում անցկացրած տարիները, յեթե սովորողը մինչ ուսումը սկսելը յեղել է արտելի անդամ կամ բանվոր, ծառայող:

Նշված բոլոր դեպքերում պահպանվում է աշխատանքի ստաժի անընդհատությունը մի ձեռնարկության մեջ (20-րդ հոդվածով հաստատված պայմանները պահպանելու դեպքում), յեթե նույնիսկ ԲԳԿԲ-ի շարքերից արձակվելուց կամ ուսհիմնարկը թողնելուց հետո արտելի անդամը մտել է վոչ այն արտելը, վորտեղ նա առաջ աշխատում եր:

24. Արտելների բոլոր անդամների համար, բացառությամբ տանն աշխատողների, նպաստի չափը չի սահմանափակվում վոր և է սահմաններով (մաքսիմումով):

Ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում տրվող նպաստը չի կարող գերազանցել 300 ռուբլուց մեկ ամսում արտելի այն անդամների համար, վորոնք աշխատում են իրենց տանը:

Ուստի նրանց համար մեկօրյա նպաստը չի կարող գերազանցել այն գումարից, վորը կստացվի, յեթե 300 ռուբլին բաժանել այն ամսվա բոլոր օրացույցային օրերի թվի վրա, վորի ընթացքում նրանք յեղել են անաշխատունակ: Ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում հղիության և ծննդաբերության հետևանքով նպաստ տալու ժամանակ սահմանային չափի (մաքսիմում) չի կիրառվում:



## 8. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԵԼ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

25. Նպաստի չափը վորոշելիս ինկատի յե առնվում այն աշխատավարձի բոլոր տեսակները, վորոնց նկատմամբ կիրառվում են ապահովագրական մուծումները: Որինակ, նպաստը հաշվելիս նկատի չեն առնվում արտաժամյա աշխատանքի, համատեղության և ամեն տեսակի միանվագ բնույթ կրող վճարումները:

26. Նպաստը հաշվելու համար ի նկատի յեն առնվում անաշխատունակությունն սկսվելուց առաջ յեղած աշխատավարձը:

Յեթե արտելի անդամը փոխադրված է այլ աշխատանքի այն ժամանակամիջոցում, վորին համապատասխան աշխատավարձը հիմք է վերցվում նպաստը հաշվելու համար, ապա վերջինը հաշվելիս ի նկատի յե առնվում միմիայն վերջին աշխատանքի աշխատավարձը:

27. Ըստ ամիսների վարձատրվող աշխատանքի դեպքում նպաստը հաշվելիս պետք է վերցնել ամսական այն աշխատավարձը, վորը հաստատված է արտելի տվյալ անդամի համար մինչև անաշխատունակության սկզբի օրը:

Ըստ ամիսների վարձատրվող աշխատանքի դեպքում լրիվ միօրյա նպաստը (100 տոկոսով վորոշում են բաժանելով ամսական աշխատավարձն անաշխատունակության ամսվա բոլոր բանվորական օրերի վրա (ըստ գրաֆիկի):

Նոր անաշխատունակության հետևանքով բաց թողած բանվորական օրերի համար տրվում է նպաստ:

28. Աշխատանքի գործավարձային, ակկորդային և նման վճարումների դեպքում նպաստը հաշվելու համար պետք է վերցնել այն վերջին յերկու լրիվ օրացույցային ամիսների փաստական աշխատավարձը, վոր նախորդում են անաշխատունակությունն սկըսվելու ամսի առաջին օրվան:

Այն անձանց նկատմամբ, վորոնք աշխատել են յերկու ամսից պակաս, բայց վոչ պակաս մեկ լրիվ ամսից, վորը նախորդում է անաշխատունակությունն սկսվելու ամսվա առաջին օրվան, վերցնում են լրիվ ամսվա աշխատավարձը:

Յեթե արտելի անդամը մինչև անաշխատունակությունն սկսվելու ամսվա առաջին օրն աշխատել է մեկ ամսից պակաս, ապա վերցնում են մինչև անաշխատունակությունն սկսվելու օրն աշխատած ամբողջ ժամանակի աշխատավարձը:

Ընդսմին պետք է նկատի ունենալ, վոր համաձայն 26-րդ

հոդվածի նպաստը վորոշելու համար, վերցնում են աշխատավարձը ըստ վերջին աշխատանքի։

29. Գործավարձային, ակկորդային և նման վճարումների ձևով աշխատավարձ ստացողների նկատմամբ լրիվ միօրյա նպաստը (100 տոկոս) վորոշելու համար, նրանց ստացած փաստական աշխատավարձը համապատասխան 29-րդ հոդվածում մատնանշված ժամկետի, բաժանում են նույն ժամկետի բոլոր բանվորական օրերի վրա (ըստ գրաֆիկի)։

Ընդամենը այդ օրերի թվից, վորի վրա բաժանվում է աշխատավարձը, դուրս են գալիս այն օրերը, վորոնց համար տրված է նպաստ, ժամանակավոր անաշխատունակության պատճառով և հերթական և լրացուցիչ արձակուրդի օրերը, նաև առանց աշխատավարձի պահպանման պաշտոնական արձակուրդի հետևանքով բաց թողած օրերը։

Անաշխատունակության հետևանքով բաց թողած բանվորական օրերի համար նպաստ տրվում է։

30. Արտելի այն անդամների համար, վորոնք ստանում են խառն աշխատավարձ, այսինքն ամսական աշխատավարձի հետ միաժամանակ ստանում են հավելյալ վաստակ, ակկորդային աշխատավարձ և այլն, նպաստը վորոշվում է ճիշտ այնպես, ինչպես գործավարձայինների համար (հ. հ. 28-29)

31. Արտելների այն անդամների նկատմամբ, վորոնք անաշխատունակության ամսվա առաջին օրին հաջորդող յերկու ամիսների ընթացքում տասից ավելի անգամ աշխատանքից դուրս պարապուրդի պատճառով և այլն, միօրյա նպաստը հաշվում են, բաժանելով նրանց ստացած փաստական աշխատավարձը, համապատասխան 28-րդ հոդվածում նշված ժամկետի, նույն ժամկետի օրացուցային օրերի ընդհանուր թվի վրա։

Ընդամենը օրերի թվից, վորի վրա բաժանում են աշխատավարձը, դուրս են գալիս այն օրերը, վորոնց համար տրված է նպաստ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով, հերթական և լրացուցիչ արձակուրդի օրերը, նաև այն օրերը, վորոնք բաց են թողնված առանց աշխատավարձի պահպանման, պաշտոնական արձակուրդի հետևանքով։

Նպաստ տրվում են անաշխատունակության բոլոր օրացուցային օրերի համար։

32. Նրանց նկատմամբ, ովքեր ըստ աշխատանքի պայմանների չունեն հաստատապես սահմանված, աշխատանքի դուրս գալու օրերի թիվը (տանը աշխատող և այլն), նպաստը վորոշում են,



բաժանելով նրանց 28-րդ հոդվածում նշված ժամկետի համապատասխան ստացած փաստական աշխատավարձը, նույն ժամկետի օրացուցային օրերի ընդհանուր թվի վրա։

Ընդամենը օրերի թվից, վորի վրա բաժանում են աշխատավարձը, դուրս են գալիս միայն այն օրերը, վորոնց համար տրվում է նպաստ՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակ։

Նպաստը տրվում է անաշխատունակության բոլոր օրացուցային օրերի համար։

33. Կենդանի բեռնատար ուժերը (ձիեր, ուղտեր, էշեր և այլն) բանեցնող աշխատողների համար նպաստ վորոշում են, վերցնելով այն միջին աշխատավարձը, վորը հաստատվում է Գանձարկղների միության կողմից, համաձայնեցնելով այն տեղական տրանսպորտային արհեստագործական միությունների հետ։

Լրիվ միօրյա նպաստը, վորը կախված է աշխատավարձի վճարման ձևից, վորոշվում է 27-րդ կամ 28-32 հոդվածների համաձայն։

Արտելի այն անդամները, վորոնք հրաժարվում են հանձնել արտելներին իրենց (ձին, ուղտը, էշը և այլն), իրենց հիվանդության ժամանակամիջոցում ի շահագործություն չեն ապահովվում նպաստով ժամանակավոր անաշխատունակության օրերի համար։

34. Գորգային գործվածքների արտադրությամբ զբաղվող արտելների անդամների նկատմամբ նպաստը վորոշում են գորգը պատրաստելու համար պայմանագրով նախատեսված աշխատավարձը, բաժանելով այն օրացուցային օրերի թվի վրա, վորոնց ընթացքում, ըստ պայմանագրի, գորգը հանձնելու ժամկետը յերկարացվում է։

35. Արտելի՝ հարկադիր աշխատանքների դատապարտված անդամների նկատմամբ նպաստը վորոշում են այն աշխատավարձի համաձայն, վոր պահպանվում է նրանց համար արտելում՝ դատարանի վճռով։

Ուղղիչ աշխատավորական աշխատանք կատարելու ժամանակամիջոցը չի ընդհատում ստաժի ընթացքը և ստաժի մեջ չի մտնում։

## 9. ՎՈՐՏԵՂ, ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍՏԱՆԱԼ ՆՊԱՍՏ

36. Նպաստ ստանալու իրավունքը և նրա չափը հաստատվում են արհեստագործական ապահովագրական գանձարկղի կողմից։

Արտապահզանձարկղն իր բոլոր ֆունկցիաները, նպաստներով ապահովելու բնագավառում կարող է հանձնել ԱՀԿԲԲ-ին, իսկ վորտեղ այդպիսին չկա, հանձնում է ապահովագրական պատվիրակին, սակայն վերահսկողությունն իրեն վերապահելով։

Նպաստի հաշվումը և վճարումը կատարում է արտելի վարչությունը։

Նպաստը տրվում է ի հաշիվ արտելից պահվող ապահովագրական մուծումների։

Նպաստը հաշվելու և վճարելու ամբողջ աշխատանքը կատարում է արտելի փոխադարձ ապահովագրության գանձարկղը, այդ աշխատանքի համար վոչ մի վարձատրություն չի տալիս։

37. Յեթե ժամանակավոր անաշխատունակությունն սկսվել է արտելի գտնվելու վայրից դուրս (որինակ, գործուղման, արձակուրդի ժամանակ), ապա նպաստի վճարումը կատարվում է աշխատանքի տեղում (վորտեղից արտելի անդամը աշխատավարձ է ստանում)

38. Նպաստը տրվում է արտելի տվյալ անդամին աշխատավարձը վճարելու սահմանված ժամկետներին, բացի հետևյալ դեպքերից, յերբ նպաստը վճարվում է սկզբից։

ա) Այլ վայրում սանատորիական, կուրորտային բուժման համար արձակուրդ ստանալու դեպքում տրվում է սկզբից, ամբողջ արձակուրդի ընթացքում հասանելիք նպաստի յոթնասուն տակոսը, իսկ մնացած մասը տրվում է արձակուրդից վերադառնալուց հետո։

բ) Ջրի բուժման համար այլ տեղ արձակուրդ գնալու դեպքում, յեթե նշանակված է հատուկ ստացիոնար (մահճային) կամ ամբուլատորային բուժում, նպաստ է տրվում լրիվ և սկզբից, այն ամբողջ ժամանակի համար, վոր ցույց է տրված վճարման համար բժշկա-աշխատավորական եքսպերտային հանձնաժողովի կողմից (ԲԱԵՀ)։

գ) Այլ վայրում իր հաշվով բուժվելու համար արձակուրդ ստանալու դեպքում (սանատորային-կուրորտային, հատուկ ստացիոնար կամ ամբուլատորային) նպաստ տրվում է լրիվ և սկզբից արձակուրդի այն ամբողջ ժամանակվա ընթացքի համար, վոր նշանակել է սանատորիական-կուրորտային և բժշկա-աշխատավորական եքսպերտային հանձնաժողովը։

դ) Հղիության պատճառով արձակուրդ ստանալու դեպքում հղիության վերջին ամսվա համար նպաստ տրվում է ծննդաբերությունից մեկ ամիս առաջ (իսկ նպաստի մնացած մասերը տրվում են աշխատավարձի վճարման հետ միաժամանակ)։



30684-67

39. Նպաստ տրվում է միմիայն անաշխատունակության թերթիկներով։ Դրանց փոխարեն ուրիշ փաստաթղթեր չեն ընդունվում նպաստ վճարելու համար։

Թերթիկը կորցնելու դեպքում, տրվում է կրկնած (դուբլիկատ) այն մարմնի կողմից, վորը տվել է թերթիկը, ընդվորում արտելը ներկայացնում է տեղեկանք այն մասին, վոր տվյալ ժամանակի համար նպաստ չի տրվում։

40. Սխալմամբ, կամ նպաստ ստացողի չարաշահության հետևանքով (կեղծ վկայականներ ներկայացնելը և այլն, բացի 45 և 46 հոդվածներում նախատեսնված դեպքերից), բաց թողնված նպաստի ավելորդ գումարները վարչությունը նրանցից հետ է գանձում Արհապահզանձարկղի, ԱՀԿԲԲ-ի առաջարկությամբ կամ իր սեփական նախաձեռնությամբ (առանց դատարանի վորոշման)։

Չարարկության մեջ նկատվող մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության։

41. Վորպես պահանջվող աշխատանքի ստաժի ապացույց կարող են ծառայել հաշվեգրքույկները, տեղեկանքները՝ աշխատանքի տեղից, աշխատանքային ցուցակները և նրանց փոխարինող այլ փաստաթղթերը։

## 10. ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՍՏԱՑՎԱԾ ԿԱՄ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ՄՆԱՑԱԾ ՆՊԱՍՏԸ

42. Անաշխատունակության թերթիկն արտելի անդամը պիտի հանձնի արտելի վարչությանն աշխատանքի դուրս գալու որը, ընդվորում այդ որը համարվում է թերթիկը վճարման ներկայացնելու որ։

Յերբ արտելի անդամն էլ չի վերադառնում արտել աշխատանքի, նա կարող է նպաստի համար դիմել՝ աշխատունակությունը վերականգնելու կամ հաշմանդամությունը հաստատելու որվանից սկսած մինչև վեց ամիս լրանալը։

Այդ ժամանակն անցնելու դեպքում նպաստ կարող է նշանակել միայն բացառիկ դեպքերում Արտապահզանձարկղի կարգադրությամբ։

Նպաստ տրվում է անցած ժամանակամիջոցի նկատմամբ վոչ ավելի 6 ամսից, դիմումի որվանից հաշված։

43. Արտելի վարչությունը՝ անդամի առաջին կլիում վճարման

Գոս. библиотека ՀՍՍՀ Арм. ССР

ներկայացված անաշխատունակության թերթիկները պետք է հանձնի արհապահգանձարկղին ամսի 2-րդ կեսին, իսկ ամսի յերկրորդ կեսին ներկայացրած թերթիկները պետք է հանձնի հաջորդ ամսվա առաջին կեսին:

Նշված ժամկետների խախտումներով ներկայացրած թերթիկները ապահովագրական մուծումների հաշվի մեջ չեն մըտնում:

Այդ դեպքում նպաստ ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում տալիս է արտելը իր ծախքերի հաշվին:

Ներկայացրած անաշխատունակության թերթիկների վրա պետք է լինի շտամբ կամ «վճարված է» մակագրություն:

44. Արտելի անդամի մինչև մահվան օրը չստացած նպաստը ստանալու իրավունք ունեն,— դիմելով արտելի անդամի մահից հետո վոչ ուշ քան վեց ամիս ժամանակամիջոցում[1] ընտանիքի հետևյալ անդամները՝

ա) Յերեխաները, յեղբայրները և քույրերը, յեթե նրանց տարիքը 18-ի չի հասել, կամ յեթե նրանք շնորհիվ իրենց անաշխատունակության, յեղել են վախճանվածի խնամքի տակ:

բ) Ծնողներն ու ամուսինը (անկախ նրանց աշխատունակությունից) յեթե նրանք ապրում եյին վախճանվածի հետ կամ գտնվում եյին նրա խնամքի տակ:

Ծանոթություն.— Այս կանոնադրությամբ վորդեգրվածները հավասարեցվում են յերեխաներին, իսկ վորդեգրողները ծնողներին:

## 11. ՈՎ Է ԶՐԿՎՈՒՄ ՆՊԱՍՏԻՑ

45. Նպաստից զրկվում են արտելի այն անդամները, վորոնք դիտավորյալ կերպով վնաս են հասցնում իրենց առողջությանը կամ հիվանդ են ձևանում (սիմուլյանտներ): Արդեն ստացած նպաստները բռնագանձվում են արհապահգանձարկղի կողմից դատական կարգով:

46. Արտելի այն անդամները, վորոնք խախտում են բուժող բժշկի կողմից՝ նրանց համար հաստատված ռեժիմը կամ չեն ներկայացնում բժշկական քննության, առանց հարգելի պատճառի, նաև նրանք, վորոնք բուժվելու համար գնում են այլ վայր առանց բուժող բժշկի համաձայնության, կամ առանց բժշկա-աշխատավորական եքսպերտային հանձնաժողովի համաձայնության զրկվում են նպաստից՝ խախտումը կատարած օրից:

47. Արտելի այն անդամները, վորոնք հիվանդացել են հարբելու կամ հարբեցումից առաջացող գործողությունների (կռիվ, վիրավորումներ և այլն) հետևանքով՝ զրկվում են նպաստից հիվանդության առաջին հինգ օրացույցային օրերի համար:

Միայնակներին (այսինքն իր խնամքի տակ յերեխա, ամուսին և ծնողներ չունեցողներին) տրվում է նպաստ կես չափով



սկսած հարբելուց առաջացած հիվանդության վեցերորդ օրից: Ընտանիքավորներին նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով սկսած հարբելուց առաջացած հիվանդության վեցերորդ օրից:

## 12. ՈՒՄ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՈՒՂՂԵԼ ԲՈՂՈՔՆԵՐԸ

48. Նպաստը մերժելու կամ նրա չափը ճիշտ չվորոշելու դեպքում բողոքները տրվում են փոխադարձ ապահովագանձարկղների սիստեմի հաջորդ ավելի բարձր կազմակերպությանը:

Արտելի վարչության կողմից նպաստն անկանոն վճարելու կամ ձգձգելու դեպքում, բողոքները տրվում են տեղական ապահովագրական գանձարկղներին:

Արհապահովագանձարկղում ապահովագրվող վոչ կոոպերացված տնայնագործների ապահովման կանոնները ժամանակավորանաշխատունակության ժամանակաշրջանում

49. Արհապահգանձարկղում անհատականորեն ապահովագրվող վոչ կոոպերացված տնայնագործները նպաստով ապահովվում են, յեթե ապահովագրական դեպք պատահելու մոմենտին նրանք համարվել են ճշտապահ վճարողներ (մուծումների, վճարումների տեսակետից պարտք չեն մնացել):

50. Վոչ կոոպերացված տնայնագործների աշխատանքի ստաժի տևողությունը վորոշվում է բացառապես ըստ գանձարկղում անընդհատ գտնվելու ամիսների թվի:

51. Վոչ կոոպերացված տնայնագործները իրավունք ունեն նպաստ ստանալու ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում հիվանդության հետևանքով անկախ նրանց ստաժի տևողության, իսկ հղիության և ծննդաբերության ժամանակ այն դեպքում, յերբ արձակուրդ ստանալու օրին, գանձարկղում անընդհատ գտնվելու ստաժը քիչ չէ 12 ամսից:

52. Վոչ կոոպերացված տնայնագործներին նպաստ ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում տրվում է արհապահգանձարկղում ապահովագրվողի աշխատավարձի կեսի չափով, իսկ գանձարկղում մեկ տարուց վոչ պակաս ստաժ ունենալու դեպքում՝ անաշխատունակության օրերի համար սկսած

---

1) Վեճերի յենթադրության, արհեստագործական կոոպերացիայի փոխօգնության գանձարկղների կողմից նպաստների և կենսաթոշակների նշանակումների մերժման մասին: ՌՍՖՍՀ-ի Գերագույն դատարանի պլենումի պարզաբանումը 1930 թվի դեկտեմբերի 16-ին «ընդունել», որ մեր կողմից նպաստ և կենսաթոշակ նշանակելու մերժման մասին յեղած բողոքները լուծվում են ինստանցիայի կարգով և դատական քննարկման յենթակա չեն («Դատական պրակտիկա» 931 թ. № 3):

31-րդ որացուցային օրվանից՝ նպաստ տրվում է աշխատավարձի յերկու յերեքի չափով։

53. Վճարման յենթակա նպաստը չի կարող ավելի լինել ամսական 250 ռուբլուց։ Սակայն այդ սահմանային չափը (մաքսիմում) չի կիրառվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցում հղիության և ծննդաբերության հետևանքով նպաստ վճարելիս։

Համարդկոոպգանձխորհրդի նախագահության
նախագահ՝ Ա. ԺԱՐՈՎ

Նախագահության քարտուղար՝ Ա. ՄԱԼԱԽՈՎԱ

---

1937 թ. հուլիսի 31-ին ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ-ի Աշխատանքի կողմից ընդունված և 1937 թվի օգոստոսի 14-ին ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի վորոշմամբ հաստատված № 1382 «Ապահովագրվածներին հիվանդաթերթիկներ տալու կարգի մասին» հրահանգի գործողության տարածումը փոխադարձ գանձարկղների և արհեստագործական կոոպերացիայի փոխօգնության սիստեմում յեղած բուժհիմնարկների վրա և արհեստագործական կոոպերացիայի արտելների անաշխատունակ անդամներին։

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԻՎԱՆԴԱԹԵՐԹԻԿՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Արտելների անաշխատունակ անդամներին հիվանդաթերթիկներ տալու միասնական կարգ մտցնելու նպատակով ԽՍՀՄ-ի առողջապահության ժողովրդական կոմիսարիատը և փոխադարձ ապահովագրության և արհեստագործական կոոպերացիայի փոխօգնության Համամիութենական Խորհուրդը վորոշում են՝

1. 1937 թ. հուլիսին 31-ին ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ-ի Աշխատանքի կողմից ընդունված և 1937 թ. օգոստոսի 14-ին ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի վորոշմամբ հաստատված № 1382 «Ապահովագրվածներին հիվանդաթերթիկներ տալու կարգի մասին» հրահանգի գործողությունը տարածել փոխադարձ ապահովագրության գանձարկղների և ԽՍՀՄ-ի արհեստագործական կոոպերացիայի փոխօգնության սիստեմում յեղած բոլոր բուժ. հիմնարկների վրա։

2. Արհեստագործական կոոպերացիայի կոնտինգենտը սպասարկող առողջապահության մարմինների բուժհիմնարկները, արտելի անդամներին հիվանդաթերթիկներ տալիս են նույն հիմունքներով և պայմաններով, ինչպես և բանվորներին և ծառայողներին՝ Համարդկոոպգանձխորհրդի կողմից հաստատված բլանկների վրա։

ԽՍՀՄ-ի Առողջապահության Ժողովրդ. Կոմիսարի
տեղակալ ՀՐՈՊԵՐ-ԳՐԱՇՉԵՆԿՈՎ

Համարդկոոպխորհրդի նախ. նախագահի
տեղակալ՝ ՑՐԻԳՐԻԽՅԱՆ



Հաստատված է ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի կողմից

# ՀՐԱՀԱՆԳ

Հիվանդաթերթիկներ տալու կարգի մասին ընդունված 1937 թ. հուլիսի 31-ին ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ-ի Աշխատանքի կողմից.

## 1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔՆԵՐ

Ապահովագրվածի ժամանակավոր անաշխատունակությունը հաստատվում է միմիայն հիվանդաթերթիկներով («Անաշխատունակության թերթիկով»)։

Ապահովագրվածներին՝ ժամանակավոր անաշխատունակության մասին ուրիշ վկայականներ և տեղեկանքներ տալն արգելվում է՝ (բացի այս հրահանգում ցույց տրված դեպքերից— հ. հ. 12. և 22).

2. Ապահովագրվածներին հիվանդաթերթիկներ տալիս են Աշխատանքի և Հաղորդակցության Տրանսպորտային սանիտարական վարչության բուժ-սանիտարական հիմնարկների բժիշկները։

Այլ գերատեսչությունների և գիտական հիմնարկների (անկախ նրանից, թե վոր գերատեսչության են յենթակա)։ Բուժհիմնարկների բժիշկներին թույլատրվում է տալ հիվանդաթերթիկներ միայն ԽՍՀՄ-ի Աշխատանքի կամ դաշնակից հանրապետության Աշխատանքի հատուկ կարգադրություններով, վորոնք համաձայնեցրված են ՀԱՄԿԽ-ի հետ։

Վճարովի պոլիկլինիկաներում և բուժարաններում հիվանդաթերթիկներ տալն արգելվում է։

3. Այն վայրերում, վորտեղ չկան բուժող բժիշկներ, ինչպես և նավերի վրա հիվանդաթերթ. իրավունք ունի տալու բուժկետի վարիչ բուժակը, սակայն հետագա վերահսկողությունը մնում է բժշկական տեղամասի վարիչի վրա։

Այդ բուժակների ցուցակն և ժամկետներն, վորոնց համար նրանք կարող են տալ հիվանդաթերթիկներ հաստատվում են ԱԽՍ հանրապետության Աշխատանքի կամ շրջ. (յերկրի) տեսչության կողմից։

## Չ. ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽԵՂԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՏՐՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ

4. Հիվանդության կամ խեղանդամության հետևանքով աշխատունակությունը կորցնելու դեպքում հիվանդաթերթիկները տրվում են պոլիկլինիկաների, բուժարանների, դիսպանսերների, հիվանդանոցների և առողջապահական կետերի բուժող

5. Պալարախտային, հոգեկան և վեներական հիվանդությունների ժամանակ հիվանդաթերթիկներ տրվում են համապատասխան մասնագիտական բուժհիմնարկների (բաժանմունքների կաբինետների) բժիշկների կողմից:

Այդ հիվանդություններով բուժված անձանց, վորոնք դիմում են ընդհանուր բուժհիմնարկներ, բժիշկը կարող է տալ հիվանդաթերթիկ յերեք որով և պարտավոր է հիվանդին ուղարկել մասնագիտական բուժհիմնարկ (բաժանմունք, կաբինետ):

Այնտեղից, վորտեղ չկան մասնագիտական բուժհիմնարկներ (բաժանմունքներ, կաբինետներ) հիվանդաթերթիկը վերոհիշյալ հիվանդությունների դեպքում, տալիս են ընդհանուր բուժհիմնարկների բժիշկները:

6. Հիվանդության կամ խեղանդամության հետևանքով արձակուրդ տրվում է այնքան ժամանակով, մինչև վոր վերականգնվում է աշխատունակությունը կամ հաստատվում է հաշմանդամությունը բժշկա-աշխատավորական եքսպերտային հանձնաժողովի կողմից:

7. Բժշկներն իրենք իրավունք ունեն տալ հիվանդաթերթիկներ 3 որից վոչ ավելի ժամանակով ամեն մի անգամը, իսկ ընդհանուր հաշվով հիվանդության տվյալ դեպքի կամ խեղանդամության համար՝ 10 որից վոչ ավելի ժամանակով:

8. Անաշխատունակությունը սկսվելուց 10 որ անց հիվանդաթերթիկի ժամկետի յերկարացնելը և ամեն մի հաջորդ յերկարացում կատարվում է բուժող բժշկի կողմից միայն գլխավոր բժշկի հաստատումից հետո, կամ տվյալ բուժհիմնարկներում կազմակերպված բժշկակոնսուլտացիոն հանձնաժողովի կողմից:

Այդ հանձնաժողովների կազմակերպման կարգը հաստատվում է ԽՍՀՄ-ի Առողջկոմատի կողմից համաձայնեցնելով այն ՀԱՄԿԽ-ի հետ:

Ծանոթություն.— Այն բուժհիմնարկներում, վորտեղ կազմակերպված են բաժանմունքներ ըստ մասնագիտության, հիվանդաթերթիկի ժամկետի յերկարացնելու իրավունքը 10 որ լրացնելուց հետո՝ գլխավոր բժշկի կողմից դրվում է բաժանմունքների վարիչների վրա:

Խոշոր բուժհիմնարկներում գլխավոր բժիշկը, համաձայնության գալով քաղաքբաժնի հետ, կարող է աշխատունակության եքսպերտիզայի ֆունկցիաները դնել հատուկ բժշկի վրա (տվյալ բուժհիմնարկի), վորը և պատասխանատու է եքսպերտիզայի համար:



9. Բոլոր այն անձինք, վորոնց տրված է իրավունք յերկարացնել հիվանդաթերթիկը՝ 10 որից ավելի (հ. 8) կարող են յերկարացումը վավերացնել հիվանդին անձամբ քննելուց հետո միայն:

10. Աշխատունակ ապահովագրվածների համար բոլոր լաբորատորական (ֆիզիոթերապեա, ռենտգենոթերապիա և այլն) պետք է կատարվեն նրանց համար վոչ աշխատանքի ժամերին առանց հիվանդաթերթիկներ տալու, բացի այն դեպքերից, յերբ ըստ տվյալ հետազոտության կամ պրոցեդուրայի բնույթի այդ աշխատանքները կարող են կատարվել միմիայն աշխատանքի ժամերին:

11. Յերբ անաշխատունակ ապահովագրվածը առողջապահական կետն է դիմում (սուր հիվանդությունների կամ արտադրության մեջ ստացված վնասվածքների դեպքում) բժիշկը տալիս է հիվանդաթերթիկ 1—2 որով:

Այդպիսի թերթիկի ժամկետի յերկարացումը կատարվում է ընդհանուր կարգով, այսինքն պոլիկլինիկաների, բուժհիմնարկների և այլ բուժհիմնարկների բժիշկների կողմից, նաև բժշկակոնսուլտացիոն հանձնաժողովների կողմից:

Յեթե առողջապահական կետում չկա բժիշկ, այլ կա միայն բուժաքույր կամ բուժակ, ապա նրանք հիվանդաթերթիկ չեն տալիս, այլ ցույց տալով առաջին ոգնություն, ուղարկում են անաշխատունակ ապահովագրվածին պոլիկլինիկա կամ բուժարան, այնտեղ հիվանդին անհապաղ ընդունելու համար:

Յեթե ապահովագրվածը աշխատունակ է ճանաչվում ապա հիվանդաթերթիկ չի տրվում, այլ առաքման թերթիկի մեջ նշում է արվում գալու և գնալու ժամանակի մասին:

12. Յերեկոյան կամ գիշեր ժամանակ առողջապահական կետ դիմելու դեպքում, յերբ պոլիկլինիկայում կամ բուժարանում հերթապահ ընդունելություն չկա, իսկ առողջապահական կետում հերթապահ է միայն բուժաքույրը կամ բուժակը, վերջինները ցույց տալով առաջին ոգնություն, առաջարկում են անաշխատունակին հաջորդ որը ներկայանալ պոլիկլինիկա կամ բուժարան, իսկ կարիք յեղած դեպքում բժիշկ հրավիրել տուն: Ընդ սմին նրանք տալիս են տեղեկանք իրենց ստորագրությամբ և կնիքով: Տեղեկանքի մեջ նշվում է աշխատանքից ազատվելու ժամը և բերվում են համառոտ տվյալներ հիվանդության կամ վնասվածքի բնույթի, մարմնի տաքության մասին և այլն:

Պոլիկլինիկայի կամ բուժարանի բժիշկը ապահովագրվածին ճանաչելով անաշխատունակ, տալիս է նրան հիվանդաթերթիկ, տեղեկանքում ցույց տրված մոմենտից հաշված: Իսկ յեթե բժիշկը ճանաչում է նրան աշխատունակ, ապա նա տալիս է հիվանդա—

Թերթիկ հաշված անցեկանքում ցույց տրված ժամկետից մինչև միայն տվյալ հերթափոխության վերջանալը:

13. Երբ հիվանդը գտնվում է ստացիոնարում (հիվանդանոցում, կլինիկայում և այլն) բուժվելու ամբողջ ժամանակամիջոցում հիվանդաթերթիկ տալիս է բուժող բժիշկը բաժանմունքի վարիչի հետ միասին:

Ստացիոնարի գլխավոր բժշկի վրա պատասխանատվություն է դրվում հիվանդին ստացիոնարից ժամանակին դուրս գրելու, նաև ժամանակին հաշմանդամության նշանակելով հիվանդներ ուհայտնաբերելու, նրանց գործերը բժշկա-աշխատավորական էքսպերտային հանձնաժողովին ուղարկելու համար:

14. Անաշխատունակ ապահովագրվածին ստացիոնարից դուրս գրելիս՝ հիվանդաթերթիկի ժամկետի յերկարացումը կատարվում է ստացիոնարի բուժող բժշկի կողմից, բաժանմունքի վարիչի հետ միասին՝ մինչև բուժհիմնարկ ներկայանալու կամ բժիշկ տուն հրավիրելու համար նշված ժամկետը, սակայն միանվագ ոչ ավելի 15 օրից: Ստացիոնարից դուրս գրելու ժամանակ կարող է նախատեսնվել այն, որ հիվանդը ժամանակավորապես փոխադրվի այլ աշխատանքի:

15. Մեկ բժիշկ ունեցող բուժհիմնարկներում (գյուղական վայրերում, հեռավոր շրջաններում և այլն) բժշկին իրավունք է վերապահվում միանձնաբար տալ հիվանդաթերթիկներ հիվանդության ամբողջ ժամանակամիջոցում:

16. Ուրիշ քաղաքում հատուկ բուժում ստանալու համար հիվանդաթերթիկ տրվում է բժշկա-աշխատավորական էքսպերտային հանձնաժողովի կողմից (այդ հանձնաժողովի բացակայության դեպքում —բուժող բժշկի կողմից շրջանային առբաժնի հաստատմամբ):

Ծանոթություն.— Սանատորական-կուրորտային բուժման համար արձակուրդ տալու կարգը, նաև սանատորիայում հիվանդացողներին հիվանդաթերթիկներ տալու կարգը որոշվում է ՀԱՄԿԽ-ի կողմից հրատարակված հատուկ հրահանգներով, որոնք համաձայնեցվում են ԽՍՀՄ-ի Առժողկոմատի հետ:

17. Յերկարատև և հաճախակի հիվանդացող ապահովագրվածներին գլխավոր բժիշկը պետք է ամրացնի բժիշկներ, հայտնելով դրա մասին Փարգործկոմին: Ապահովագրվածին բժիշկ ամրացնելու մասին Փարգործկոմը պետք է գրավոր հայտնի ապահովագրվածին նախազգուշացումով, որ ուրիշ բժիշկների կողմից նրան տված հիվանդաթերթիկները վճարման յենթակա չեն լինի (բացի բացառիկ դեպքերից, Փարգործկոմի հատուկ որոշմամբ:

Յեթե ապահովագրվածի որևէ հիվանդություն չի վերաբերվում նրան ամրացված բժշկի մասնագիտությանը, ապա կոնսուլտացիայի համար հրավիրվում է համապատասխան մասնագետ:



Այդ ժամանակ հիվանդաթերթիկը տրվում է յերկու բժիշկների կողմից միասին, իսկ այդ թերթիկի ժամկետի յերկարացումը՝ 10 օրը լրանալուց հետո կատարվում է ընդհանուր կարգով (հ. հ. 8—9):

## 3. ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

18. Հղիության և ծննդաբերության ժամանակ հիվանդաթերթիկը տրվում է հղիացածների համար գոյություն ունեցող կոնսուլտացիաների բժիշկների կողմից, իսկ որտեղ կոնսուլտացիաներ չկան, ընդհանուր բուժհիմնարկների մանկաբարձ-գինեկոլոգների կողմից: Այդպիսի մասնագետների բացակայության դեպքում հիվանդաթերթիկը տալիս է ընդհանուր ընդունելություն կատարող բժիշկը:

19. Վիժումի դեպքում հիվանդաթերթիկ տրվում է միայն այն ժամանակ, յերբ վիժումը կատարված է ըստ բժշկական ցուցմունքի—հիվանդանոցում կամ ծննդատանը (ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թ. հունիսի 27-ի որոշման 1-ին հոդված) ԽՍՀՄ-ի Օրենքների Ժողովածու 1936 թ. № 34 հ. 309): Այդ դեպքում հիվանդաթերթիկը տրվում է վիժում կատարող բժշկի կողմից գլխավոր բժշկի հաստատմամբ: Ժամկետը որոշվում է նրանով թե արդյոք, ինչպես է առողջության վիճակը և ինչ դրամամուտք ունի ապահովագրվածը:

Վիժման մյուս դեպքերում (ներառած այն դեպքը, յերբ վիժումը սկսված է բուժհիմնարկից դուրս և վերջացված է բուժհիմնարկում) հիվանդաթերթիկ չի տրվում:

Ծանոթություն.— 1. Ինքնաբերական վիժման դեպքում (մինչև հղիության 196 օրը լրանալը) հիվանդաթերթիկ տրվում է այնպես, ինչպես և ընդհանուր հիվանդության ժամանակ:

Ծանոթություն.— 2. Յեթե բուժհիմնարկից դուրս կատարած վիժումը առաջացնում է յերկարատև հիվանդություն, ապա առանձին, բացառիկ դեպքերում հիվանդաթերթիկ կարող է տրվել միմիայն Փարգործկոմի կամ սոցիալական ապահովագրության խորհրդի յուրաքանչյուր անգամ յեղած հատուկ որոշման հիման վրա և այս դեպքում աշխատունակության 11-րդ օրվանից սկսած ժամանակի համար (հաշված վիժման օրից), սակայն հիվանդաթերթիկի վրա բժիշկը մակագրում է «աբորտնի» և դրա մասին հայտնում է Դատախազությանը:

## 4. ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՎԱՆԴ ԱՆԴԱՄԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

20. Ընտանիքի հիվանդ անդամին խնամելու համար հիվանդաթերթիկ տրվում է հիվանդին բուժող բժշկի կողմից:

Կարանտինի դեպքում հիվանդաթերթիկ տրվում է համաճարակի գծով աշխատող բժշկի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում սանիտարական կամ բուժող բժշկի կողմից:

Այդ հիվանդաթերթիկները տրվում են խստորեն համապատասխան «Ժամանակավոր աշխատունակության նպաստների կանոնադրության» 12—14 հոդվածների:

21. Ընտանիքի հիվանդ անդամին խնամելու համար հիվանդաթերթիկները տրվում են 3 որից վոչ ավելի ժամանակով: Այդ ժամկետի յերկարացումը կատարվում է առանձնապես բացառիկ դեպքերում միայն (նայած հիվանդության ծանրության և կենցաղային պայմանների) բուժող բժշկի կողմից, գլխավոր բժշկի հետ միասին այն էլ սահմանափակ ժամանակով:

22. Հիվանդաթերթիկներ տալը չի թույլատրվում՝

ա) Խրոնիկական հիվանդին խնամելու համար:

բ) Հիվանդին խնամելու համար, յեթե նրան տեղ է հատկացված ստացիոնարում, բայց նա ինքը՝ կամ նրա ընտանիքը հրաժարվում է այդ տեղից:

գ) Առողջ յերեխաներին խնամելու համար, որինակ, մոր հիվանդության դեպքում, մսուրների, մանկապարտեզների և այլ յերեխաների վրա կարանտին դնելու դեպքում և այլն (այդ դեպքում ընտանիքի ապահովագրված անդամին, վորը խնամում է յերեխային, տրվում է տեղեկանք մոր հիվանդության կամ կարանտինի մասին):

Յեթե հիվանդ յերեխայի հետ նրան խնամելու համար ստացիոնարում գտնվում է և մայրը, ապա հիվանդաթերթիկը տրվում է այն դեպքում միայն, յեթե նրա մնալը ստացիոնարում անպայմանորեն անհրաժեշտ է:

## 5. ՀԻՎԱՆԴԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ՏԱԼՈՒ ՅԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

23. Այն ձեռնարկությունների և հիմնարկների բանվորներին և ծառայողներին, վորոնց կից կան պոլիկլինիկաներ, հիվանդաթերթիկներ տրվում են այդ պոլիկլինիկաների բժիշկների կողմից: Իսկ յեթե առողջության վիճակը թույլ չի տալիս հիվանդին ներկայանալ պոլիկլինիկա և պոլիկլինիկան չունի իր բժիշկները, նրան տանը օգնություն ցույց տալու համար, ապա հիվանդաթերթիկը տրվում է բուժհիմնարկի կողմից, ըստ ապահովագրվածի բնակավայրի: Մնացած ապահովագրվածներին հիվանդաթերթիկներ տալիս են բուժհիմնարկների բժիշկները կամ ըստ ապահովագրվածի բնակավայրի կամ ըստ նրա աշխատանքի տեղի:

24. Այն ապահովագրվածներին, վորոնց ժամանակավոր աշխատանքի տեղից դուրս (որինակ, գործուղման ժամանակ, հանգստի տանը, և այլն) հիվանդաթերթիկներ տրվում են նրանց



ժամանակավորապես գտնվելու վայրում, բայց բուժհիմնարկի գլխավոր բժշկի հաստատմամբ:

25. Այն հիվանդների նկատմամբ, վորոնք սկզբնական հիվանդաթերթիկը ստացել են իրենց մշտական բնակության տեղում, այդ թերթիկի ժամկետի յերկարացումն ուրիշ տեղերում կատարվում է միայն այն դեպքում, յերբ սկզբում հիվանդաթերթիկ տվող բուժհիմնարկը, տալիս է իր յեզրակացությունը հիվանդի մեկնելու հնարավորության մասին: Այդ յեզրակացությունը տրվում է բուժող բժշկի և գլխավոր բժշկի կողմից միասին:

26. Հիվանդաթերթիկը տրվում է անաշխատունակությունը հաստատված որը, բացի ստացիոնարում բուժվելու դեպքից:

27. Հիվանդաթերթիկը լրացնելիս անհրաժեշտ է՝

ա) «Յեզրափակիչ դիագնոզ» սունյակում անպայման նշել անաշխատունակության հիմնական պատճառը, բնավ չփոխարինելով այն հիվանդության սիմպտոմով:

«Դիագնոզ» և «Յեզրափակիչ դիագնոզ» սունյակները լրացնել վոչ լատիներեն լեզվով:

գ) «Ռեժիմ» սունյակը անպայմանորեն լրացնել բոլոր դեպքերում:

դ) Սուր կերպով հարբելու հետեվանքով առաջացած անաշխատունակության դեպքում,— նաև սիմուլյացիայի, բուժման ռեժիմը խախտելու կամ ժամանակին բուժարան չներկայանալու դեպքերում,— անել նշումներ հենց հիվանդաթերթիկում:

Բոլոր դեպքերում, յերբ հիվանդաթերթիկի տալը կամ նրա ժամկետը յերկարացնելը պետք է կատարվի բուժող բժշկի կողմից,— գլխավոր բժշկի հաստատությամբ կամ նրա հետ միասին անաշխատունակության հիվանդաթերթիկը պետք է յերկուսի կողմից էլ ստորագրվի:

28. Յեթե աշխատավարձի հերթական վճարման ժամկետին անաշխատունակությունը դեռ շարունակվում է, ապա բուժող բժիշկը տալիս է ապահովագրվածին հիվանդաթերթիկի «շարունակությունը», իսկ սկզբնական հիվանդաթերթիկի «անցնել աշխատանքի» սունյակում նշում է՝ «շարունակություն» տալու մասին:

Յեթե անաշխատունակությունը տեվում է 10 որից ավելի, ապա «շարունակությունը» տրվում է բժշկա-կոնսուլտացիոն հանձնաժողովի կողմից (հ. հ. 8—9 կամ բուժող բժշկի կողմից, գլխավոր բժշկի հաստատմամբ:

## 6. ԲԺՇԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄԸ

29. Հիվանդաթերթիկը սխալ տալու կամ սխալ լրացնելու համար բժիշկները յենթարկվում են դիսցիպլինար կամ քրեական պատասխանատվության: Աշխատունակության եքսպերտիզայի բնագավառում ամբողջ աշխատանքի դրվածքի և հիվանդաթեր-

Թիկի տալու և հաշվառքի պատասխանատվությունը դրվում է գլխավոր բժշկի վրա (յեթե նույնիսկ եքսպերտիզայի համար հատուկ պատասխանատու անձնավորություն լինի)։

30. Ապահովագրվածների գանգատները բժիշկների վրա անաշխատունակության թերթիկները տալու հարցում քննվում և լուծվում են գլխավոր բժշկի կողմից, իսկ յեթե տվյալ բուժհիմնարկում կա բժշկա-կոնսուլտացիոն հանձնաժողով—այդ հանձնաժողովի կողմից։

Գլխավոր բժիշկների և բժշկա-կոնսուլտացիոն հանձնաժողովների վորոշումների և գործողությունների դեմ յեղած բողոքները քննվում են բժշկա-աշխատավորական եքսպերտային հանձնաժողովների կողմից, վորոնց վորոշումները համարվում են վերջնական։

31. Առաջ հրապարակված բոլոր կանոնները և հրահանգները, վորոնք հակասում են սույն կանոնադրությանը՝ վերացվում են։

Հ. Ա. Մ. Կ. Խ.-ի քարտուղար՝ Ն. ՇՎԵՐՆԻԿ

Ս. Ս. Հ. Մ-ի Առողջապահության ժողովրդական կոմիսարի տեղակալ՝ ՊՐՈՊՍԿԵՐ-ԳՐԱՇՉԵՆԿՈՎ

Թարգմանիչ՝ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Սրբագրիչ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ ССР
им. А. Мясникяна



# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1. Տորֆամշակում։
2. Շինարարական հումքի (վոչ հանքային հանածոներ) հանույթ։
3. Շինարարական աղյուսի արտադրություն։
4. Մածուցիկ շինանյութերի արտադրություն։
5. Բեեկնային արտադրություն։
6. Խեժաթորում։
7. Կպրաթորում։
8. Ածխայնացություն։
9. Հյութամթերում.
10. Բրեստային մթերում
11.
12. Բալրերայի մթերում։
13. Կրի արտադրում պատրաստելու համար։
14. Բոլոր աշխատանքները գյուղատնտեսության մեջ. բացի անասնաբուծության, խոզաբուծության, ճագարաբուծության և թռչնաբուծության վերաբերյալ աշխատանքներից։

կր 0.
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0051017
17284